

ԹԵՄԱ 1

Դասընթացի անվանումը՝	«ՀՀ-ում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առանձնահատկությունները»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առանձնահատկությունների քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը:
- Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները:
- Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները:
- Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները:
- Ներպետական կարգավորումը և միջազգային փորձը:

Դասընթացը վարում է ՀՀ արդարադատության խորհրդի անդամ Վարուժան Աբելյանը: